

սին տեղեկութիւններ կը դաննէք նաեւ այլուր:

Նոր տոմարի ներմուծումը Եղիսարէթուպոլսոյ մէջ տեղի տուաւ մեծ վէճերու: Հոռմի յարած ըլլալուն հակառակ՝ Թրանսիլվանիոյ հայութիւնը երկար ատեն չգործածեց Գրիգորեան տոմարը: 1757-ին փորձ մը եղաւ Եղիսարէթուպոլսոյ մէջ մտցնելու նոր տոմարը, որուն համաձայն էին երեւելիներն ու մտաւորականները: Դէմ էր հոգեւորականութիւնն ու հասարակ ժողովուրդը: Քաղաքային վարչութիւնը անմիջապէս խկ խօսքէն անցնելով գործի՝ հրաման ըրաւ որ Դեկտ. 25-ին լատիններուն հետ տօնեն Մնունդը, եւ «կտրիճ»ները պատին աւետիսի: Եղիսարէթուպոլսոյ դիւանատան արձանագրութիւններէն կ'երեւայ որ չեն հնազանդած ասոնք: Քաղաքային վարչութիւնը իբրեւ պատիժ, 1757 Դեկտ. 28 թուակիր որոշմնադրով մը, կ'արգելէ «Կտրիճ»-ը պարսկերէնէն մեծերուն գաւազան կրել պաշտօնական առիթներէ զատ, եւ Մնունդին «ա-

ւետիս»ի ու դատկին «հայր մեր»ի պատիւ ցնոր տնօրինութիւն: Կտրիճները կը բողոքեն: Պատվելի Հասարակը, այսինքն քաղաքային վարչութեան գործադիր պետը 1758 Փետրուարին կը պատասխանէ թէ կտրիճներու պետերը պէտք է յետ այսու «տայաս չի քայցընուն, քանց միայն երբ որ գօնկրէկաձիայէն բանօվն ըլլան»՝ այսինքն գաւազան չկրեն բացի այն պարագայէն երբ եղբայրութեան մէկ գործով կ'երթան, «աւետիս Մնունդեանը եւ հայր մեր դատկին չուզենք որ քալեն կլճալայեօվ, հապա քալեն որպէս մէկալ գօնկրէկաձիաներն, երկու եղբայր գօնկրէկաձիային անընտրով որորմութիւն»՝ այսինքն Մնունդեան աւետիսի եւ դատկին հայր մերի չպտտին վայնասունով, այլ քալեն ինչպէս միւս եղբայրութիւնները, երկու եղբայր նպաստ ժողովելով յանուն եղբայրութեան. կ'արտօնուի եղբայրութիւնը որ 15-16 տարեկան ամէն տղայ, հարուստ եւ աղքատ, իր մէջը առնէ, եւայլն:

